

| | | | |
|------|--------------------------|---------------------------------|------------|
| | Եւ. | Յօ֊. | |
| ՈՂ. | պազխին (ովանք) | պազխիներ | |
| ԵԽ. | պազխուն | պազխիներուն | |
| Քօց. | պազխիէն | պազխիներէն | |
| Գրծ. | {պազխիօք {պազխուն Տեա | {պազխիներօք {պազխիներուն Տեա | |
| | Յօ֊. | Եւ. | Յօ֊. |
| ՈՂ. | պիթուն (ամենքը) | Տէչ(ոչ ինչ, ընաւ.) | Տէչեր |
| ԵԽ. | պիթունին | Տէչի | Տէչերու |
| Քօց. | պիթունէն | Տէչէ | Տէչերէ |
| Գրծ. | պիթունօք | Տէչօք | Տէչերօք |
| | Եւ. | Յօ֊. | |
| ՈՂ. | հոյց. | Ֆիլան (այսինչ) | Ֆիլաններ |
| ԵԽ. | դր. | Ֆիլանի | Ֆիլաններու |
| Քօց. | | Ֆիլանէ | Ֆիլաններէ |
| Գրծ. | | Ֆիլանօք | Ֆիլաններօք |
| | (Ըրբունայիւն) | ՄՈՆԻԹ Ս. ԴԱՌԹՈՒՐԵՐ | |



Թ Ղ Ք Ա Յ Ո Ւ Ք Ի Ի Ն

ԹՊ. ՄԻՋՈՉԳՈՅԻՆ ՈՐԹՈՒՆԴՈՒԹՅՆԵՐԻ ՀՈՄՈՒԹՈՂՈՂ

Ամէն անգամ, երբ մի որեւէ միջազգային "Տնամտողիկ" մասին խօսք է լինում, հասարակութեան լարուած հետաքրքրութիւնն նորան թելադրում է, որ այնտեղ անտարակոյս գիտութեան կամ հասարակական կեանքին վերաբերեալ ննդիրներ իրանց վերջնական լուծուած են ստանալու. սակայն փորձը տարիներէ ի վեր ցոյց է ունել, որ անգամ ըստ ըստ, պետութիւններին ղեկավարում. "Տնամտողիկներ" սովորաբար առանց գործնական հետեւանքի են մնում: Եղբայր կարելի է ստել եւ գիտական Տնամտողիկներ Նկատամբ. այն բազմաթիւ դասախօսութիւնները, որոնք նոցանում կարգացում են, ըստ մեծ մասին շուտով լոյս են տեսնում, եթէ արդէն յայտնի չին գիտական աշխարհին: Բայց թէ այստեղ յարմար առիթ է տրուած զանազան երկիրների գիտնականաց անձամբ միմեանց ճանաչելու եւ կարծիքներ, փոխանակելու՝ փաստս ոչ ոք հերքելու չէ:

Ահա թէ ինչու ԹՊ. միջազգային արեւելագետների Տնամտողիկը, որ տեղի ունեցաւ Տնամտողիկում 4—10 Սեպտեմբերի, ոչ պա-

կաս բազմամարդ էր, քան վերջին անգամ Տնամտողիկում. ներկայ էին այնպիսի յայտնի արեւելագետներ, ինչպէս Bartholomae, Salemann (իրանական բաժնում), Nöldeke, Goeje, Barth (արաբ.), Winckler, Haupt, Bezold (ատուրական), Naville, Erman (եգիպտ.), Hirt (Հինական) եւ այլք: Տնամտողիկը բաժանուած էր 8 մասնաճիւղի. Ա. ընդհանուր Տնգ. Եւրոպական, Բ. Տնգ. Զնգ. Եւրոպական, Գ. Իրան (որին կը վերաբերէր Տայկական բաժնին), Դ. Յետին Տնգ. Եւրոպական, Ե. Կենդանական եւ արեւելեան Ասիա, Ե. ընդհանուր սեմական, Զ. Խալմական, Է. Եգիպտական, Ը. Ք. Աֆրիկէ. Ա. Արեւելքի եւ Արեւմուտքի փոխադարձ ազդեցութիւնն: Ընդհանուր նախագահ ընտրուեցաւ D. Behrmann. Գրիթէ Հոդագնախ բոլոր քաղաքակիրթ ազգերը ունէին իրանց պաշտմանը եւ մասնաւոր ներկայացուցիչները:

Տայկական բաժինն ամենահարուստներից մէկն էր հանդիսանում. գոնէ նախապէս խոստացած էին դասախօսութիւններով մասնակցել հետեւեալ անձինք՝ Jensen (Տիտուս-Տայկական Նշանագրերի վերլուծում), Lampros (Տայ ընտանիքներ, Բիւզանդիոնում եւ նոցա ազդեցութիւն), Marquardt (Տայ այլուրեքի ծագման մասին, Lehmann (ու. Կենդանի Տայ գաւառաբարաններ հաւաքուած առաջարկութիւնք, Ք. Տայերի գաղթիկը Թուրքացոյ եւ Իրանացոյ գաղթման հետ կապուած), Kaist (Տայ եւ Կովկասեան լեզուների շփումն յոգնակնում), Finck (Ուսումնական ուղեւորութիւն ի Կովկաս), Գր. Խալմեանց (ու. Ինչու վերայ է հիմնուած Մ. Խորանացու "Տայոց պատմութեան" մէջ յիշուած 4 յոյն մասնագրերի վկայութիւն, թէ Կրեսոսի յաղթողն՝ Տայոց (արքայ) Արաաչէն էր. (Ա. Գ. Նախ Բ.): Ք. Հիպոպոլիտի Տնամտողիկային ժամանակագրութեան Տայ խմբագրութիւն), Լեւոն Մտերեանց (ու. Ուրարտեան կամ վանեան տարլը Տայոց լեզու. Ք. Երբայեցիքէն-տատական եւ Տայերէն-տատական՝ լեզուի մասին, Գ. Նկատողութիւնք Թրքական բառագրութեան նիւթի մասին Տայ պատմագիր Կիրակոս Գանձակեցու մօտ ԹՊ. Գ.), Է. Արաաչէն (Տայերի յարաբերութիւնները արեւմտքի հետ միջին դարերում եւ յայտ), Բ. Խալմեանց (ու. Տայ ժողովրդական գիտագնական վէպը, Ք. Տայ նախարարութեանց

1 Յատեր, ինչպէս յայտնի է, պարսկական ծագմամբ մի ազգութիւն է Թուրք մօտ 112-000, որոնք Բաքուի եւ Եւրասիական Նահանգներում կը բնակին:

ծագման մասին ըստ ուրարտեան եւ վանեան բեւեռագրերի): Ղախագահում էր պրոֆ. Զալեման:

Սակայն, այս անձինքներից Համաժողովին գրեթէ միայն կէսն էր եկած. այսպիսով, մենք առիթ չունեցանք ծանօթանալու պրոֆ. Ղալմ. պրոսի առաջարկած Տետաքըրի նիւթի Հետ, թէ Բ՛նջ գեր են խաղացել Հայերը Բիւզունդիոնում, Ե՛րբ եւ Բ՛նջ պայմաններում է սկսուել նոցա ազդեցութիւնն այստեղ եւ երբ վերջացել է ինդիրս մեզանում ըստ արժանաւորութեան ուսումնասիրութեւ չէ: Ղանագահս մենք բախտ չունեցանք իմանալու, թէ Բ՛նջ սքանչելի ընտանիով է բաց արել պրոֆ. Jensen Հետտիաների անցեալի խորհրդաւոր դուռը եւ թէ Բ՛նջ կապ ունի նոցա լեզուն Հայ լեզուի Հետ. ինչպէս յայտնի է, սորանից մի քանի տարի առաջ մեծ արժուէ Հանց թէ մեր եւ թէ Եւրոպական թերթերում յարգելի ուսուցչապետի՝ «սեսութիւնը» Հայերի եւ Հետտիաների ազգակցութեան մասին. բայց որովհետեւ որ եւ միայն ենթադրութիւն էր, այն եւս առանց որ եւ է լուրջ գիտական Տիւրքի, ուստի եւ շուտով մտացուեցան: Ենդիրս այն է, որ... Հետտիաների լեզուն մեզ բնաւ յայտնի չէ:

Բացակայ էր եւ Marquardt, սակայն ուղարկած էր իւր դասախօսութիւնն, որի բովանդակութեան Հետ Համառօտի ծանօթացրեց ունիւղիւրներին պ. Ղախագահը, գերմանացի գիտնականը Հայ պարսեանի գլխաւոր աղբիւրները պահաւ, յոյն եւ ասորի լեզուների մեջ է պարում. մի քանի Համամտութիւններ (Խ եւ ասոր. ա, ր եւ յուն. ρ) յիրաւի արջոց էին, բայց ընդհանուր առմամբ ինդիրս բարդութիւնը ամէն քայլում իրան զգացուցանել էր տալիս: Ուրախակն երեւոյթ է տեսնել, որ վերջին տարիները շարունակ փորձեր են լինում եւ յուրպէս գիտնականներից պարզել Հայերի մութ պատմական անցեալը. ինդիւրներ, որոնք մեզանից երկու տասնեակ տարի առաջ անլուծելի էին թւում գիտութեանն, այժմ շնորհիւ նոր նոր աղբիւրների միտնգամայն այլ լուսաբանութիւն են ստացել: Ահա թէ ինչու պրոֆ. Լեմանի յայտարարած դասախօսութիւնը՝ Հայերի առաջին գալստեան մասին՝ գրաւել էր շատերի Հետաքըրութիւնն. սակայն երկու ասարդ ուսուցչապետը, Հեռու ձնալով պատմական փաստերից, շարունակ ծանրանում էր իւր ենթադրութիւնների վերայ: Ընդունելով Winckler-ի տեսութիւնը, թէ Վիմնրոնը Հայա-

ստան են մտած, անցնելով նախ Վովկասեան լեռնաշղթան, որի հետեւանքն պէտք է լինէր «Խալդիայի» (ըստ Լեմանի նոյն Ուրարտու երկիրն է) երկու մասերի բաժանուելն, պ. պրոֆ. Հայերի ճանապարհի հետքերն արեւմտցում է որոնում. Թրակիայից անցնելով Փոքր Ասիա, նոքա մի ժամանակ նստած են եղել Փոռիգիւսում, ինչպէս սպացուցանում է տեղեւ Արիֆիան քաղաքի անունն. ուստի հաւանական է ընդունել, որ Հայերը եւ Փոռիգացիք ազգակից են միմեանց: Միւս կողմից Օրիֆիոս (ըստ Լեմանի՝ Արմենիում) քաղաքի գոյութիւնն թուստաղեւում ենթադրել է տալիս, որ Հայերը, կամ նոցա մի մասը, այստեղ եւս բնակած են եղել: Այսպիսով Հայերը Վիմնրոնների հետ ոչ մի կապ չունին, այլ եկած են Փոքր Ասիա դեռ աւելի վաղ, Ռուսաս Ա. եւ Բ. ժամանակ (այսինքն մտաւորապէս 722—680 թ.): Սակայն Հայաստան մտան արդէն խառնուած այլ ազգերի հետ. գաղթուած տեղի է ունեցել աւնուազն երեք անգամ՝ ա. Հայերը սկզբում ոտ դրին նոր երկիրը իրբեւ անխառն ազգութիւն. Բ. Նստան Փոքր Ասիայում՝ Թրակացիների հետ կարգէն ձուլուած. Գ. Հայաստան կեան Հետտիաների հետ խառն... (այստեղ երկու ասարդ գիտնականը բաւական հեռու է գնացել իւր ենթադրութիւններում): Երբեւ պայցոյց պ. Լեման արժեք բերեց իւր անձնական դիտողութիւնն Վովկասում եղած ժամանակ՝ Հայերը ըստ մեծ մասին տարբերում են միմեանցից իրանց արտաքին գծագրութեամբ: Աերջպէս արդարացնելու Համար խալց անունն, որով նա մկրտել է Ուրարտու երկիրն եւ ազգն, պ. պրոֆ. մտանցոյց է անում Քաննոփոնի մի տեղեկութեան վերայ, թէ «Խալդերը պահել էին լեռներում»: (Մենք թոյլ կը տանք նկատել, որ խալց անունն բնաւ յայտնի չէ ասորական աղբիւրներին, իսկ Վանեան յիշատակարանը յիշում են խալց ասորաշօք քառանդի մասին): Որչափ էլ գովելի է ուսուցչապետ Լեմանի ձգտումն՝ պարզել այս կնճռու ինդիւրը, սակայն չպէտք է մոռանալ, որ լուրջ տեսութեանց գլխաւոր արժանաւորութիւնն գիտնականի վստահութիւնն չէ, եւ ոչ էլ նորա սուր Հայեացքը, անգամ բնագրումն, այլ նախ եւ առաջ բաւարար նիւթը, որ միտնգամայն բացակայ էր այս դէպքում:

Գր. Վարստի դասախօսութիւնն շոյափում էր նոց Հայերէնի գոյական անուանց յոգնակի թիւը, որի կազմութեան նմանութիւնն նա

գտնում է կովկասեան լեզուներում. օրինակ բերելով վրացերէնի kac-i (ձարգ) բառն եւ հոլովելով kac-isa, kac-sa, kac-o, kac-itha եւ այլն, յոգնակի kac-eb-i, kac-eb-isa, kac-eb-sa, kac-eb-o, kac-eb-itha եւ այլն պ. դասախօսը ժամատուր է և ապա մեր բաժակ-ներ, բաժակ-ներ-ի, բաժակ-ներ-ին, բաժակ-ներ-ով եւ այլն ձեւերի հետ, մտանալով, որ երեւոյժայ հոգեբանականն է եւ հիմք չէ տալիս երկու միանգամայն տարբեր լեզուներ միմեանց հետ ժամատուրելու: Հայերէնի ոգին բովանդակ համար՝ բառական չէ առձեռն ճերբակնութիւն. ներքի օգտուել, այլ կարելու է անպայման հմուտ ղեկավարներ եւս ունենալ, որոնց կլասիկական կենդրոններն իրեննայում, ղենեւտկում եւ էլ միանում է պարելու:

Այս տեսակէտից Գր. Յիւզը անկական ունի մեծ առաւելութիւն եւրոպական “Հայագէտներէ”, առջեւ, միանգամայն սիրապետելով Հայ լեզուին: Նկարագրելով իւր ուսումնական ուղեւորութիւնն ի կովկաս եւ անձնական տպաւորութիւնները, յարգելի գիտնականը ասանապէս կանգ առեց էլ միանգամայն վերայ, որտեղ նա երկար ժամանակ ապրած է, մասնացոյց արեց այն գունձարանի վերայ, որ թագնուած է նորա մտտեանգարանում. “զըրմանալի է տեսնել, որ մինչեւ այժմն այդ թանկագին գրուոր յիշատակարանները կարգի բերուած չեն, անգամ ցուցակ չունին, այլ անխնամ վայր ի վերայ միմեանց վերայ կուտակուած են”, գերմանացի ճանապարհորդի նկատողութիւնն ցաւօք ճիշդ էր:

Հետաքրքրութիւնից զուրկ չէին պրօֆ. Գր. խալաթեանի երկու դասախօսութիւնները, որպէս եւ լեւոն Մսերեանցի երեք վերոյիշեալ ուսումնասիրութիւնը, որոնց մասին թերեւս առիթ կ'ունենանք խօսելու. Հ. Աւարեանն եկած չէր, իսկ Բ. խալաթեանցի առաջարկած 2 նիւթը մասամբ արդէն ծանօթ էին Հայ գիտական աշխարհին:



ԳՐՈՒՆՆ ԺՈՐՏՆՆ

Բանասերգծութիւն է Երաժշտութիւն:

A quoi servent les vers? & chanter.
Th. de Banville.

Եօթը գեղարուեստներուն մէջ՝ Ռուսուորքի եւ երաժշտութեան արուեստներն, են որոնք ամենէն աւելի բարդատուութեան կէտեր կը ներկայացնեն,

Հասարակ կէտեր՝ այնչափմանն իրարու, եւ երբեմն այնչափ տարբեր իրարմէ:

Երգի մէջ ծնաւ բանաստեղծութիւնը հին ատեն, եւ Յունաց մեծ բանաստեղծը, կամ թերթողայրը, իր կենանքին ամենն մեծ մասն անցուց քաղքէ քաղքը երթալով՝ երգելու համար իր հիանալի ճերթուածները որով կը շահէր իր օրապահիկը: Գաղղոյ բանաստեղծութիւնը ծնաւ հիւսիսային՝ սյոնիքը langue d'oïl մէջ՝ Ժ.Ա. էն մինչեւ ԺԵ. դարերու Գրոսվերերէն, եւ Հարաւային՝ սյոնիքը langue d'oc է մէջ՝ երբող Գրոսպատուրներու յօրինած ստղերէն: Հայկական Բանաստեղծութիւնն ալ՝ թէ ոչ իր ծնունդին մէջ, գէթ իր եւս բարուած գարեբուն մէջ, գլխաւորաբար ընկերացաւ եկեղեցական երգեցողութեան: Աս մեծ առնչութեանը պատճառով է անշուշտ՝ որ քննորով կը պատկերանայ բանաստեղծութիւնը, եւ գաղղերէնի մէջ ալ chantre անունը փոխաբերաբար արուած է բանաստեղծներուն: Պէրսեան երգիչը՝ Համբասն է, նէտոնի երգիչը՝ Վերգիլիտո: Հին ատեն՝ սովորութիւն էր նաեւ որ բանաստեղծը կուշտմով մը սկսէր իր գործը քնարին՝ ուսկից կ'անկալէր իր ներշնչութիւնը: Ասոր մէկ գեղեցիկ օրինակը ունինք Հ. Արտէն Բագրատունիի Գիւնգազնեղութեանը սկիզբը՝ ուր կը պատկերանայ երաժշտութեան Հերշտալը, “Խմբից զուարթնոցըն գասապետ”:

Հին ճերթուածներու գլուխներն ալ իրարմէ կը բաժնուէին երգերով, առաջին երգ, երկրորդ երգ, կամ նուազ:

Պէտք չէ սակայն շփոթել բանաստեղծական երգը թատերական երգահանութիւններու (compositions) հետ, օրեօրեան հետ, որոնք սեւ է առնչութիւն չունին բանաստեղծական գարբուրու երգին հետ: Օրերայի մէջ կ'արտասանեն մեզի եղանակները նուազանկութեամբ մը, անխտար կշիռով (rhythme) բառեր՝ որոնք իրենց նմանակայնութիւններովը երբեմն կը յիշցնեն Յանգը ըստածը. բայց են բառեր ոտանաւոր չեն, եւ կէթ է ըլլային իսկ, ան արվարչի երաժշտութիւնը՝ որուն յարմարուած են անկարող պիտի ըլլար բացարեւոյտ ոտանաւորին չընան եւ հոգին, եւ քանի որ՝ ակէ զա՞՝ ան երաժշտութիւնը ինքն իրմով զոյրութիւն ունի, եւ անկախ է սեւէ բանաստեղծութենէ:

Ուստի՝ տարբեր երգ մըն է Ռուսուորքը, զոր՝ ինչպէս տեսանք, այնքան ինամբով գնահատուած է Թեոտոր աը Պանվիլ ըուն երաժշտութիւնէն, պնդելով սակայն թէ.

— Il n'y a pas de poésie et de vers en dehors du Chant. եւ բացարեւելով Ռուսուորքը.
— Le Vers est la parole humaine rythmée.

Ահաւասիկ ուրեմն բացարձակ նմանութեան եւ բացարձակ տարբերութեան գլխաւոր կէտերը գեղարուեստի աս նշանաւոր երկու ճիւղերուն միջեւ, որոնց պատկանողները Հասարակ իրաւունքով կրնան կուշիլ արուեստագետներ, այսինքն arististes, գաղղերէն բառով: